

Ատրպէյճանական «Մերկացած Սուրը»

Ատրպէյճանական հանրապետութեան ստեղծման երկունքի օրերուն տասնեակ հազարաւոր հայեր սպանուեցան Պաքուի, Արցախի եւ Ատրպէյճանական ովկէանոսի տարածքին գոյութիւն ունեցող հայկական բնակավայրերու մէջ: Ապա սկսաւ Արցախի ատրպէյճանացումը՝ հայերու արտագաղթը այդ տարածքներէն, Լեւոնային Ղարաբաղի ինքնավար Մարզի տնտեսական եւ մշակութային տեկրատացիան, ատրպէյճանական հողի վրայ հայկական կեանքի աստիճանական հանգում: Վերակառուցման դարաշրջանի մէջ իրականացուեցան Սոււկայիթի, Աղտամի, Կիրովապատի, Շուշիի, Նախիջեւանի ջարդերը, Հայաստանի Մասիսի շրջանին մէջ հայերու թունաւորումը եւ նման այլ դէպքեր: Այսպէս գործեց ատրպէյճանցիին մերկացած սուրը հայերու դէմ՝ վերջիններու ֆիզիքական գոյութեան սպառնալիքով: Ասոր գուգահեռ գործեց նաեւ գաղափարական մերկացած սուրը: Այդ սուրը դարբնեցին ատրպէյճանցի մտաւորականները՝ ակադեմական Զիա Բունիաթովի գլխաւորութեամբ: Անոնք կրկնեցին թուրքերու գրեթէ բոլոր հակահայկական թէզերը: Անոնք փորձեցին մշակոյթի գանձարանէն գողնալ բոլոր այն հայ երախտաւորները, որոնք ծնած ու գործած են պատմական Հայաստանի այն տարածքներուն, որոնք այսօր կը գտնուին թուրքական կամ ատրպէյճանական հանրապետութիւններու սահմաններուն մէջ: Անոնք պնդեցին, թէ հայերը երկուորներ են: Ատրպէյճանական ու թուրքական հանրապետութիւններու սահմաններուն մէջ ապրող այսօրուան հայերը համարեցին քրիստոնեայ թուրաններ, կան քրիստոնէացած թուրանական ցեղի ներկայացուցիչներ: Գործը հասաւ հոն, որ հայկական եկեղեցիներն ու խաչքարերը համարուեցան թուրքական կամ ատրպէյճանական: Իրականուեցաւ կազմակերպուած պատմագիտական խեղաթիւրում, տուեալ տարածքի վրայ արձանագրուած պատմութիւնը համարուեցաւ այսօր այդ հողին տիրացած պետութեան պատմութիւնը: Այսպիսով թուրքական պատմութեան մաս դարձան այդ հանրապետութեան այսօրուան տարածքին վրայ կերտուած նախաուրարտական, քրտական քաղաքակրթութիւնները: Նոյն ձեւով ու օրինակով ատրպէյճանական պատմութիւն կը համարուի 1920 թուականէն ի վեր գոյութիւն ունեցող Ատրպէյճանական հանրապետութեան տարածքին կերտուած միտիական, աղուանական, հայկական, իրանական եւ այլ մշակութային ու պատմական արժէքները: Մերկացած ատրպէյճանական սուրը այսպիսով կը հնձէ նաեւ ժողովուրդներու մշակութային արժէքները:

Վերջին ամիսներուն, դարաքաղեան ժողովրդական ռամկավարական շարժման ծաւալման օրերուն, երբ ամբողջ աշխարհը կը մեղադրէր ազերի մաֆիան ու ղեկավարութիւնը հակահայկական ջարդարարական գործունէութեան մէջ, Պաքուն հրապարակ կը նետէր ուրիշ նոր մերկացած սուր մը: Ատրպէյճանի պետական հրատարակչութիւնը 1988 թուականին 41,000 տպաքանակով ուսերէն լեզուով հրատարակեց գրող ձալալ Պարկուշատի (ձառտատ ձալ Նոյրուզ Օղլուի) «Մեր-

կացած սուր» պատմավէպը՝ ակադեմիկոս Զիա Բունիաթովի յառաջաբանով: Այդ գիրքին մէջ անվիճելի կը համարուի, որ Ատրպէյճանը իրրեւ երկիր ու պետութիւն գոյութիւն է ունեցեր Զրդ դարէն առաջ, երբ ատրպէյճանցիներու նախնիներ այդ հողերը Միջին Ասիայէն գաղթեցին եւ 11րդ դարէն սկսեալ: Հեղինակը կը պնդէ, որ ատրպէյճանական է եղեր խուրամիտներու ապստամբութիւնը, երբ խուրամիտներու շարժումը Իրանի, Միջին Ասիայի եւ Կովկասի տարածքներուն 8-9 դարերուն գործող այն հակախալաթական շարժումներու հաւաքական անուանումն է, որոնք մագտակեան (մադդէական) հաւատքի դիրքերէն կը քննադատեն մահմետականութիւնը եւ հանդէս կուգան իրրեւ արաբական տիրապետութեան դէմ՝ պայքարող ուժ: Այդ շարժման ղեկավարներէն յայտնի են Ապու Մուսլիմը, Մուքանէն, Պապէքը եւ ուրիշներ: Ատրպէյճանական արդի գրողը խուրամիտներու ապստամբութեան հիմնական ղեկավար կը համարէ Պապէքը, իսկ Պապէքն ալ՝ այդ ժամանակ գոյութիւն չունեցող ազերի ժողովուրդին արժանաւոր գաւազը, հանձարեղ փիլիսոփան, պետական, ռազմական ու քաղաքական գործիչը, մեծ մարդասէրը: Անհրաժեշտ է նշել, որ Պապէքի շարժումը միւս խուրամեան շարժումներէն կը տարբերի անով, որ եթէ ան մէկ կողմով ուղղուած էր արաբական իսլամութեան դէմ, ապա միւս կողմով՝ Հայաստանի Սիւնիք եւ Արցախ աշխարհներու ապստամբութեան: Հայ հողի վրայ կոտորել է ան հազարաւոր հայեր ու քանդեր բազմաթիւ ճարտարապետական կոթողներ: Այդ ժամանակաշրջանին է որ Արցախի Սմբատ իշխանը իր տիրապետութիւնը գիջեր է պապէքեան գորքին: Այսօր Պապէքի ատրպէյճանական քաղաքական ուղղուածութիւնը այսիսով պարզ է եւ հասկնալի: Նշենք որ պապէքեան շարժումը կը ծաւալէր այն օրերուն, երբ կը հզօրանար Բագրատունեաց հայկական թագաւորութիւնը, որու դէմ էր որ հանդէս կուգար Պապէքը:

ձալալ Պարկուշատը յայտնի գէմք էր թուրանական աշխարհի մէջ: «Գորշ ձիու վրայ» արդէն ծանօթ էր թուրք ընթերցողին, թրքական «Թերճուման» թերթի միջոցով: Կասկած չկայ որ սոյն հրատարակութիւնը աւելի կը համապատասխանէ փանթուրքիստական ճաշակին:

Ուշագրաւ է նաեւ այն փաստը, որ գիրքին ատրպէյճանական տարբերակը լոյս է տեսած 1981 թուականին, իսկ անոր ուսական գանդուածային հրատարակութիւնը իրագործեր անհրաժեշտ համարուել էր 1988 թուականին: Գիրքի հրատարակումը ստորագրուել է 1988 թուականի Մայիսի 31ին, Ղարաբաղեան շարժման թէժ օրերուն, Սոււկայիթէն ետք: Արդարութեան հետամուտ մարդիկ անհամբեր կը սպասեն, թէ ինչ վերաբերում պիտի ցուցարբրէ Մոսկուան եւ հայատրպէյճանական յարաբերութիւնները ղեկավարող յատուկ յանձնաժողովը: Անոնց լուսութիւնը համաձայնութեան նշան պիտի նկատուի կատարուող այս գեղձարարութեանց: